ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 01/61-3409 «21» 02 2020

«ՋԱՏԵԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ս. ԻԶՄԱԻԼՅԱՆԻՆ
ք. Երևան, Նար-Դոսի 1. բն.31

Ծ Ա Ն Ու Ց Ում
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՋԱՏԵԳ ՍՊԸ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 13.06.2019 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ–19/29-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.10.2019 թվականը և օրենքի շրջանակում այն երկարաձգվել էր 30 օրով:

Վերը նշված պայմանագրի շրջանակում, Ընկերությունը Երևանի Արաբկիր վարչական շրջանի թվով չորս բակերի հիմնանորոգման համար նախատեսված 41621910 /քառասունմեկ միլիոն վեց հարյուր քսանմեկ հազար իննը հարյուր տաս/ ՀՀ դրամի փոխարեն կատարել է 20916703 /քսան միլիոն իննը հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել՝ 20705207 /քսան միլիոն յոթ հարյուր հինգ հազար երկու հարյուր յոթ/ ՀՀ դրամի աշխատանքներ, ընդ որում.

ա/ Կոմիտաս 2 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 5207070 /հինգ միլիոն երկու հարյուր յոթ հազար յոթանասուն/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 1741524 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր քսանչորս/ ՀՀ դրամի չափով համապատասխան աշխատանքներ, չեն կատարվել 3465546 /երեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար հինգ հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքներ:

բ/ Տիգրանյան 5 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 8000700 /ութ միլիոն յոթ հարյուր/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2901297 /երկու միլիոն իննը հարյուր մեկ հազար երկու հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել 5099403 /հինգ միլիոն իննսունինը հազար չորս հարյուր երեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

գ/ Խաչատրյան 31, 33, 33/1 շենքերի համատեղ բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 9707070 /իննը միլիոն յոթ հարյուր յոթ հազար յոթանասուն/ ՀՀ դրամի չափով

նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 7457638 /յոթ միլիոն չորս հարյուր հիսուն յոթ հազար վեց հարյուր երեսունութ/ ՀՀ դրամի չափով ախատանքներ, չեն կատարվել 2249432 /երկու միլիոն երկու հարյուր քառասունինը հազար չորս հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

դ/ Ազատության 11, 11ա, 9ա շենքերի համատեղ բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 18707070 /տասնութ միլիոն յոթ հարյուր յոթ հազար յոթանասուն/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 8816244 /ութ միլիոն ութ հարյուր տասնվեց հազար երկու հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 9890826 /ինը միլիոն ութ հարյուր իննսուն հազար ութ հարյուր քսանվեց/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129